ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Թիվ 122
05 դեկտեմբերի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 30-ին կայացած թիվ 9 նիստի որոշումները:
Թիվ 34-Ն որոշումը սահմանված կարգով ուղարկվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն:

Առդիր՝ 9 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

30. նոյեմբերի 2017 թ. N 9 նիստի

N 33 որոշում

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 14 –րդ հոդվածի 6 -րդ կետով.

Որոշում է

1. Հաստատել Հայկական համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Մ. Դավթյան			
Ա. Մանուկյան			
Մ. Ստեփանյան			
Ռ. Ավետիսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հայկական
համայնքի ավագանու
2017 թվականի նոյեմբերի 30-ի
N 9 նիստի N 33 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1.	Հայկական համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին:	Ռ. Ղազարյան համայնքի ղեկավար
2.	Հայկական համայնքի վարչական տարածքում 2018թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին	Ռ. Ղազարյան համայնքի ղեկավար
3.	Գույքահարկի զիջման մասին	Մ. Դավթյան Ավագանու անդամ
4.	Գույքահարկի զիջման մասին	Մ. Ստեփանյան Ավագանու անդամ

30.11.2017թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

N 9 նիստի
N 34-Ն որոշում

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավան համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սահմանված կարգով հրապարակման հաջորդող 10 –րդ օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Մ. Դավթյան			
Ա. Մանուկյան			
Մ. Ստեփանյան			
Լ. Եպիսկոպոսյան			
Հ. Հակոբյան			
Ա. Նավասարդյան			
Ռ. Ավետիսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 34-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել `հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հիգ հարյուր դրամ.

2) սույն կետի ,1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար«Տեղական տուրքերի կվճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի կվճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում վեց հազար հինգ հարյուր դրամ:

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս հազար դրամ:

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասներկու հազար հինգ հարյուր դրամ

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում վեց հազար հինգ հարյուր դրամ:

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս հազար դրամ:

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասներկու հազար հինգ հարյուր դրամ

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմվախ բնական կամ հեղուկացված գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսունհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ:

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ:

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ:

4) ծխախոտի արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ:

5) Սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հազար դրամ:

11. Համայնքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար մեկ հազար դրամ:

12. Համայնքապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայություններ դիմաց վճար սահմանել մեկ հազար դրամ:

13. Հայկավան համայնքի վարչական տարածքի յուրաքանչյուր ընտանիքի համար խմելու ջրի վարձ սահմանել յուրաքանչյուր ամիս մեկ հազար դրամ:

14. Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների աղբահանության սակագին սահմանել 1 քմ- համար 20 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

30. նոյեմբերի 2017թ

N 9 նիստի

N 35 որոշում

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Գույքահարկի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15 –րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով էդիկ Սարգսյանի դիմումը

Որոշում է

1. Հայկավան համայնքի բնակիչ՝ էդիկ Սարգսյանին պատկանող ԳԱԶ 2401 մակնիշի ավտոմեքենայի գույքահարկից զիջել 8500դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Մ. Դավթյան			
Ա. Մանուկյան			
Մ. Ստեփանյան			
Ռ. Ավետիսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

30. նոյեմբերի 2017թ

N 9 նիստի

N 36 որոշում

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Գույքահարկի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15 –րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Կառլեն Ավետիսյանի դիմումը

Որոշում է

1. Հայկավան համայնքի բնակիչ՝ Կառլեն Ավետիսյանին պատկանող ՎԱԶ 21063 մակնիշի ավտոմեքենայի գույքահարկից զիջել 6900 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Մ. Դավթյան			
Ա. Մանուկյան			
Մ. Ստեփանյան			
Ռ. Ավետիսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ